ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 մարտի 2015 թվական N 30-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգով, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանին և մարզպետի օգնական Զարզանդ Նիկողոսյանին 3 օրով՝ 19.03.2015թ. մինչև 21.03.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով.
2. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին 6 օրով՝ 22.03.2015թ. մինչև 27.03.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պաշտոնական գործերով.
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանին 4 օրով՝ 19.03.2015թ. մինչև 22.03.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով.
4. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Արագած Ղևոնդյանին՝ իրեն ամրակցված ԿԻԱ Օպտիմա մակնիշի 041 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով, 1-ին կետով, նշված ժամանակահատվածում սահմանված կարգով ապահովել սպասարկումը.
5. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Անտոն Գրիգորյանին՝ իրեն ամրակցված Տոյոտա Քամրի մակնիշի 800 LL 60 պետհամարանիշի ավտոմեքենայով, 3-րդ կետով, նշված ժամանակահատվածում սահմանված կարգով ապահովել սպասարկումը:
6. Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

2015թ. մարտի 19
ք. Կապան